ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

№_____ «_____»_____20 թ.

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան,

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կողմից զբաղեցրած ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Երևանյան փողոց թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի ենթավարձակալության պայմանագրի ժամկետն ավարտվել է 2022 թվականի մայիսի 17-ին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 624-րդ հոդվածի 2-րդ մասի՝ եթե պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը, վարձատուի առարկությունների բացակայությամբ շարունակում է օգտվել գույքից, պայմանագիրը ճանաչվում է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Տեղեկացնում եմ, որ 2019 թվականի մայիսի 17-ին կնքված թիվ 1 ենթավարձակալության պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձատու ֆիզիկական անձ Արմինե Հովհաննեսի Ղուկասյանի կողմից առարկություն չի ներկայացվել և Տեսչական մարմինը շարունակում է օգտվել անշարժ գույքից, ուստի 2019 թվականի

0054, Երևան, Դավթաշեն 4-րդ թաղ., Ա. Միկոյան 109/8, էլ. փոստ՝ utfsib@utfsib.gov.am, հեռ.՝ (+374 60) 86 66 60

մայիսի 17-ին կնքված թիվ 1 ենթավարձակալության պայմանագիրն օրենքի ուժով ճանաչվել է վերսկսված՝ նույն պայմաններով անորոշ ժամկետով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը՝ armeps.am/ppcm համակարգ մուտքագրված ՀՀ վարչապետի աշխատակազմի և ֆիզիկական անձ Արմինե Հովհաննեսի Ղուկասյանի միջև կնքված ենթավարձակալության պայմանագրի գումարն ավելացնել 1 080 480 (մեկ միլիոն ութսուն հազար չորս հարյուր ութսուն) ՀՀ դրամով:

Հայտնում եմ նաև, որ Տեսչական մարմնի կողմից վարձակալված տարածքները անհատույց օգտագործման տարածքներով փոխարինելու վերաբերյալ պահանջը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտե, սակայն վերջինիս կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում դեռևս որևէ տարածք չի առաջարկվել Տեսչական մարմնին:

Հարգանքով՝

X ***ԳԵՂԱՄ ՇԱԽԲԱԶՅԱՆ***

Կատարող՝ ՔՏՀԱՏՄ բյուջետային գործընթացի պատասխանատու
Ա.Մարգարյան
Հեռ. +37460866666 (ներքին 1101)